

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅ



Քննարկվել են գյուղատնտեսության տարբեր ոլորտների խնդիրներ

Աշխատանքային այցով ԱՄՆ-ում գտնվող ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը հանդիպում է ունեցել ԱՄՆ գյուղատնտեսության (USDA) քարտուղարի տեղակալ Մայքլ Սքուզի հետ: Հանդիպման նպատակն էր՝ քննարկել Հայաստանում ԱՄՆ գյուղատնտեսության մենտի աջակցությամբ իրականացվող ծրագրերն ու նախաձեռնումները և առաջիկա համագործակցության հնարավոր ուղղությունները: Հանդիպման ընթացքում կողմերը կարևորել են հատկապես կենդանիների բրուցեյլոզ հիվանդության դեմ պայքարի և դրա կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը:

Այս համատեքստում հատուկ անդրադարձ է կատարվել բրուցեյլոզի ազգային ծրագրի մշակման նախապատրաստական աշխատանքների, բրուցեյլոզի ազգային վերահսկման և արձագանքման ռազմավարության մշակման, պատվաստումների նպատակահարմարության, գյուղատնտեսական կենդանիների համարակալման և հաշվառման իրականացման և մի շարք այլ հարցեր: «Հայաստանում այսօր արդիական է կենդանիների բրուցեյլոզ հիվանդության դեմ պայքարի արդյունավետ միջոցների կիրառումը, և այս հարցում մենք բարձր ենք գնահատում ԱՄՆ գյուղատնտեսության աջակցությունը և փորձի փոխանակման միջոցով համագործակցությունը հայ մասնագետների հետ», - նշել է իր խոսքում նախարար Սերգո Կարապետյանը:

Նախարարը ընդհանուր ուղղություններով ներկայացրել է նաև ՀՀ գյուղատնտեսության ոլորտում արձանագրված վերջին զարգացումները, ոլորտի աջակցությանն ուղղված պետական ծրագրերն ու դրանց արդյունքները: Հանդիպմանը քննարկվել են նաև Հայաստանի գյուղատնտեսության բնագավառի տարբեր ճյուղերում USDA-ի օժանդակությամբ վերջին տարիներին իրականացվող համատեղ ծրագրերը, ինչպես նաև՝ Գյուղատնտեսության աջակցությամբ Հայաստանում հիմնադրված Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնի (ATC) ու Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոնի հիմնադրամի (CARD) գործունեությունը: Անդրադարձ է եղել նաև գյուղատնտեսության ոլորտում Հայաստանի մասնավոր խորհրդատվական համակարգի զարգացման անհրաժեշտության հարցին: Զրույցի ավարտին կողմերը վերահաստատել են պատրաստակամությունը ընդլայնել Հայաստանում իրականացվող ծրագրերի շրջանակը՝ ելնելով ոլորտի առաջնահերթություններից:

* * *

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ԱՄՆ կատարած աշխատանքային այցի շրջանակում, Վաշինգտոնում հանդիպում է ունեցել ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) Եվրոպայի և Եվրասիայի բյուրոյի ղեկավարի տեղակալ Ջոնաթան Կատոյի հետ:

Հանդիպման ընթացքում կողմերը, բարձր գնահատելով փոխգործակցության ներկա մակարդակը, քննարկել են USAID-ի կողմից Հայաստանում իրականացվող ծրագրերի ընթացքը և ՀՀ գյուղատնտեսության նախարարության և ԱՄՆ ՄԶԳ միջև հետագա համագործակցության հեռանկարները: «ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից իրականացվող ծրագրերը մեծապես նպաստում են մեր երկրում գյուղատնտեսության ոլորտի զարգացմանը: Ուստի անհրաժեշտ է ընդլայնել երկկողմ համագործակցության շրջանակները, մշակել ու իրագործել նոր համատեղ ծրագրեր՝ դրանցում ներառելով ոլորտի թիրախային խնդիրները», - նշել է իր խոսքում նախարար Սերգո Կարապետյանը: Ընդգծելով, որ վերջին տարիներին, միջազգային կազմակերպությունների աջակցությամբ, Հայաստանում հաջողվել է բարելավել սննդամթերքի անվտանգության ենթակառուցվածքները՝ նախարարը նշել է, որ այժմ կարևոր է արդիական է համարում հատկապես՝ կենդանիների համարակալման և հաշվառման իրականացումը, որը կնպաստի մասմթերքի հետազոտության ապահովմանը:

Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել նաև ձկնաբուծության բնագավառում ջրի խնայողատար ռեժիմով նորագույն համակարգերի ներդրման հարցին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Մարզում առկա են գյուղատնտեսության զարգացման յուրյ նախադրյալներ

Վարչապետ Յուրիկ Աբրահամյանն աշխատանքային այցով մեկնել է Կոտայքի մարզ:

Կառավարության ղեկավարը, Կոտայքի մարզպետ Կ. Գուլոյանի ուղեկցությամբ, նախ այցելել է մարզի Գողթ համայնքում գտնվող «Էկոտոմատո» ՓԲԸ վարդերի և բանջարեղենի աճեցման ջերմատներ, ծանոթացել ընկերության կողմից արտադրական ծավալի ընդլայնման նպատակով իրականացված աշխատանքներին, ներդրումային, արտահանման ու զարգացման ծրագրերին, ստեղծված աշխատատեղերին և ժամանակակից տեխնոլոգիաներով կազմակերպված արտադրական գործընթացին: Նշվել է, որ ջերմատներում կատարվում են բոլոր գործընթացների ավտոմատ կարգավորում, արհեստական լուսավորություն, ներդրված է ոռոգման կաթիլային համակարգ: Վարչապետին ներկայացրել են, որ ներկայումս «Էկոտոմատո» ՓԲԸ կառավարման ներքո է գտնվում 8 հա ընդհանուր մակերեսով ջերմատնային համալիր, որի կառուցման համար ներդրվել է շուրջ 7.7 մլրդ դրամ, ստեղծվել է շուրջ 120 աշխատատեղ՝ 140.000 դրամ միջին աշխատավարձով: Էկոտոմատո ՓԲԸ ներկայացուցիչները նշել են, որ ծրագրում են տարեկան արտադրական ծավալը հասցնել 10-13 մլն հատ ծաղկի:

Գողթ համայնքից ուղևորվելով Արմավյան քաղաք՝ վարչապետն այցելել է Արմավյան քաղաքում տեղակայված «Մուլտի Սթոուն» ՓԲԸ քարերի և փայտի վերամշակման արտադրամասեր, հետևել արտադրական գործընթացին, հետաքրքրվել առաջիկա ծրագրերով ու անելիքներով: Ընկերության պատասխանատուները վարչապետին տեղեկացրել են, որ ընկերությունը բավական լավ արդյունքներ է արձանագրել արտադրանքի արտահանման տեսանկյունից (ԱՄՆ, Ռուսաստան, Եվրոպական երկրներ), և ներկայումս քննարկվում են նաև արտահանման շուկաների ընդլայնման հնարավորությունները:

Հաջորդիվ Արմավյանի քաղաքապետարանում Յուրիկ Աբրահամյանը հանդիպել է Կոտայքի մարզի մի շարք համայնքների ղեկավարներին: ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը, ՀՀ Էկոնոմիկայի նախարար Կարեն ԶՃմարիտյանը և Կոտայքի մարզպետ Կարապետ Գուլոյանը զեկուցել են մարզում իրականացվող պետական աջակցության ծրագրերի ընթացքի և կատարված միջոցառումների մասին: Ապա մարզի համայնքների ղեկավարները ներկայացրել են իրենց համայնքներում իրականացված ծրագրերն ու առաջնահերթ լուծում պահանջող խնդիրները:


Վարչապետը, ամփոփելով քննարկումը, նշել է, որ Կոտայքի մարզում առկա են գյուղատնտեսության զարգացման յուրյ նախադրյալներ, և կառավարությունը պատրաստ է քննարկել գյուղատնտեսության խթանման հեռանկարային ծրագրերի սուբսիդավորման հարցը: Կառավարության ղեկավարը կարևորել է շահագրգիռ գերատեսչությունների ու մարզպետարանի համակարգված համատեղ աշխատանքը, և բարձրացված մի շարք հարցերի լուծման առնչությամբ հանձնարարականներ տվել պատասխանատու գերատեսչությունների ղեկավարներին և մարզպետին:

Արտահանման ծավալներն ավելացել են	Էջ 3
Ընտանեկան ֆերմերություն	Էջ 5
Մասնագետի խորհուրդ	Էջ 7

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Ոլորտում գրանցվել է բավականին մեծ առաջընթաց

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն հրաժեշտի հանդիպում է ունեցել Հայաստանում Եվրամիության պատվիրակության ղեկավար, դեսպան Տրայան Հրիսթեայի հետ:



Հանդիպման սկզբին նախարարը շնորհակալություն է հայտնել ԵՄ պատվիրակության ղեկավարին Հայաստանում իր առաջընթացի ընթացքում կատարած աշխատանքի և գյուղատնտեսության բնագավառում սերտ համագործակցության համար: «Վերջին չորս տարիների ընթացքում մեր երկրի գյուղատնտեսության ոլորտում գրանցվել է բավականին մեծ առաջընթաց: Այդ հաջողությանը մեծապես նպաստել են

Եվրամիության հետ իրականացվող համատեղ ծրագրերն ու անձամբ Ձեր գործունեությունը», - նշել է նախարարը:

Նախարարը հավելել է, որ առավել շոշափելի արդյունքներ երկկողմ համագործակցության շնորհիվ, վերջին շրջանում հաջողվել է գրանցել, մասնավորապես, սննդամթերքի անվտանգության ապահովման և այդ ոլորտում օրենսդրական դաշտի բարելավման գործում:

Շնորհակալություն հայտնելով նախարարին ջերմ ընդունելության համար՝ դեսպան Տրայան Հրիսթեան համոզմունք է հայտնել, որ Հայաստանում Եվրամիության պատվիրակության հաջորդ ղեկավարի օրոք երկկողմ համագործակցությունը կհասնի ավելի բարձր մակարդակի: Միաժամանակ նա վստահեցրել է, որ Եվրամիությունը կշարունակի օժանդակություն և աջակցություն ցուցաբերել Հայաստանին:

Հանդիպման ավարտին նախարար Սերգո Կարապետյանը մաղթել է Տրայան Հրիսթեային աշխատանքային հաջողություններ իր հետագա գործունեության մեջ:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅ

Հեկտարից մինչև 5 փոննա բերք են ակնկալում

Վերջերս ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն այցելել է սահմանամերձ Տավուշի մարզ՝ պտղատու այգիների մշակման, արտադրության ու իրացման աշխատանքներին հետևելու նպատակով: Նախարարի այցի առաջին կանգառը՝ Պտղավան համայնքում էր, որտեղ մարզպետ Հովհիկ Աբովյանի ուղեկցությամբ, «Հայկական միրգ» ընկերության կողմից հիմնված Նեկտարիի այգիներում, ծանոթացել են իրականացվող աշխատանքներին:



Ծրագրի շրջանակներում, ընդհանուր առմամբ, Տավուշի մարզի Արճիս, Պտղավան և Դեբեդաբան համայնքներում հիմնվել են 24 հեկտար ղեղձենու, նեկտարիի, կեռասենու, ընկուզենու և սալորենու այգիներ: Երկու տարի առաջ «Հայկական միրգ» ընկերությունը, Ֆերմեր Սպարտակ Դազարյանին պատկանող հողատարածքում, հիմնել է մոտ 4.5 հեկտար նեկտարիի և ղեղձենու այգիներ: Ծրագրի միջոցներով հտալիայից ներկրվել են տնկիներ, ներդրվել է կաթիլային ոռոգման համակարգ, շուտով այգիներում կտեղադրվի նաև հակակարկտային ցանց:

Ֆերմերը ծրագրի արդյունքներից գոհ է, այգիներն ինտենսիվ են, ուստի արդեն հեկտարից մինչև 5 տոննա բերք է ակնկալում: Տեղում Նոյեմբերյանի տարածաշրջանի գյուղապետերի հետ քննարկվել են նաև ղեղձի և խաղողի մթերմանն առնչվող հարցեր:

Նախարար Սերգո Կարապետյանը հավաստիացրել է, որ մթերման հետ կապված խնդիրներ չեն առաջանա: «Այս տարի Տավուշի մարզում ղեղձի բարձր բերք է սպասվում, իսկ խաղողի բերքը նախորդ տարվա համեմատ, 20-25 տոկոսով ավել կլինի», - նշել է իր խոսքում նախարարը: Անդրադառնալով մթերման գնին՝ նախարարը նշել է, որ նախարարությունը կհետևի, որպեսզի գները խելամիտ լինեն և երկուստեք շահավետ:

Այնուհետև նախարարն այցելել է Բագրատաշեն համայնքում միջազգային կազմակերպությունների աջակցությամբ հիմնված՝ «Վիվա ֆրուիտ» ՍՊԸ-ի չրի արտադրամաս, որտեղ ղեղձի, սև սալորի, տանձի, ծիրանի չրեր են պատրաստվում:

Ընկերության տնօրեն Վիգեն Հովհաննիսյանի խոսքով՝ իրենք ստանում են Էկոլոգիապես մաքուր արտադրանք, որը հիմնականում արտահանվում է Ռուսաստան: Սերգո Կարապետյանն այցելել է նաև մարզի Բագրատաշեն համայնքում գտնվող 55 հեկտար տարածքով ձիթենու այգիներ, որոնք հիմնվել են դեռևս 1960-ական թվականների կեսերին: Այստեղ ֆերմեր Տիգրան Բեջանյանը տեղեկացրել է, որ իրենք մշակում են 4 տեսակի ձիթապտուղ. այս տարի ակնկալում են ստանալ 10-11 տոննա բերք, իսկ իրացումից և իրացման գնից գոհ են: Այցի շրջանակում նախարարն այցելել է Արճիս համայնքի ֆերմեր Արմենակ Գաբրիելյանի տնտեսություն. նա զբաղվում է ղեղձենու մշակությամբ, ունի շուրջ 7000 քմ այգի, այս տարվա բերքատվությունից էլ գոհ է:

ՀԱՍՏԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅՈՒՆ

Գնահատվել են ներդրումն ու ջանքերը

Ամերիկայի Միացյալ Նահանգներ կատարած աշխատանքային այցի ավարտին, ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը հյուրընկալվել է ԱՄՆ գյուղատնտեսության և գյուղատնտեսության ազգային ինստիտուտի (USDA/NIFA) ծրագրի ղեկավար Թիմ Գրոսսերին:

Հանդիպման ընթացքում, կողմերը մտքեր են փոխանակել մեր երկրում USDA-ի օժանդակությամբ իրականացվող համատեղ ծրագրերի և դրանց ուղղությունների ընդլայնման և հետագա համագործակցության հեռանկարների շուրջ:

Նախարարը կարևորել է՝ երկկողմ համագործակցության զարգացման և Հայաստանում մի շարք ծրագրերի իրականացման գործում, Թիմ Գրոսսերի անձնական ներդրումն ու ջանքերը և իր երախտագիտությունը հայտնել կատարված աշխատանքի համար: ,Հայաստանի անկախացումից ի վեր՝ շուրջ 13 տարի, Դուք համակարգել եք USDA-ի ծրագրերը և, Ձեր օժանդակությամբ, մեր երկրի գյուղատնտեսության ոլորտում ստեղծվել են կարևոր կառույցներ, գործուն աջակցություն է ցուցաբերվել պետական և մասնավոր հատվածին,- իր խոսքում նշել է նախարար Կարապետյանը:

Հանդիպման ավարտին՝ գյուղատնտեսության զարգացման գործում ունեցած բեղմնավոր և բացառիկ ներդրման համար, նախարարը Թիմ Գրոսսերին պարգևատրել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության ոսկե մեդալով:



ՄԵՄԻՆԱՐ

Անհրաժեշտ խորհրդատվություն ֆերմերներին

Վերջերս Գեղարքունիքի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնի և գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոնի կողմից կազմակերպվել էին սեմինար-խորհրդատվություններ Մարտունու տարածաշրջանի Ձորագյուղ, Վաղաշեն և Աստղածոր համայնքներում:

Ձորագյուղ համայնքին պատկանող կարտոֆիլի դաշտում տեղի ունեցավ սեմինար՝ «Կարտոֆիլի հիվանդությունները, վնասատուները և պայքարը դրանց դեմ» թեմայով: Սեմինարը վարում էին ԳԱՀԿ-ի փոխտնօրեն Արշալույս Հայրապետյանը և կենսաբանական գիտությունների թեկնածու Ալֆրեդ Գրիգորյանը: Ա. Գրիգորյանը սեմինարի մասնակիցներին տեղեկացրել է կարտոֆիլի հիվանդությունների, դրանց առաջացման պատճառների և կանխարգելման



միջոցառումների մասին: Խորհուրդ է տվել, թե ինչպիսի թունաքիմիկատներ օգտագործեն վնասատուների դեմ պայքարի դեպքում, որպեսզի հասնեն սպասված արդյունքին: Սեմինարի ավարտին՝ Ա. Գրիգորյանը և Ա. Հայրապետյանը պատասխանել են մասնակիցներին հուզող հարցերին:

Վաղաշեն համայնքի ֆերմեր Կամո Վարդանյանին պատկանող կաղամբի հողամասում քննարկվել են «Կաղամբի գլխավոր վնասատուները, հիվանդությունները և պայքարը միջոցառումները դրանց դեմ» և «Պտղատու ծառերի հիվանդությունները և պայքարը դրանց դեմ» թեմաները: Խնձորի այգում մասնագետները ուսումնասիրել են հիվանդ ծառերը և տվել համապատասխան ցուցումներ:

Հաջորդ սեմինարը Աստղածոր համայնքում էր: Ֆերմերների հետ նույնպես քննարկվել են կաղամբի վնասատուների մասին: Մասնագետները դիտողություններ են արել կաղամբագործներին և առաջարկել մասնագիտական մոտեցումներ՝ ցանկալի արդյունքի հասնելու համար: Սեմինարի ավարտին բոլոր մասնակիցները ստացել են թեմաների վերաբերյալ տեղեկատվական թերթիկներ:

Գեղարքունիքի ԳԱՄԿ

ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հանրապետությունում գրեթե բոլոր գյուղատնտեսական մթերքների մասով ընթանում են բերքահավաքի աշխատանքները:

Հուլիսի 22-ի դրությամբ, օպերատիվ տվյալներով, հանրապետությունում արտադրվել է շուրջ 140 հազար տոննա պտղի և հատապտղի համախառն բերք, այդ թվում՝ շուրջ 95 հազար տոննա ծիրանի համախառն բերք, որը 2013 թվականի ցուցանիշը (88.8 հազար տոննա) գերազանցում է ավելի քան 6 հազար տոննայով: Հատկապես ծիրանի բարձր բերք է ստացվել Արմավիրի, Արագածոտնի և Արարատի մարզերից: Հանրապետությունում ծիրանի բերքահավաքի աշխատանքները դեռևս շարունակվում են:

ՍՄՈՒԼՍ

Արձանագրված օպերատիվ ցուցանիշներ

Մամուլի ասուլիսի ընթացքում ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Սամվել Գալստյանը հրապարակել է բուսաբուծության ոլորտում ընթացիկ տարվա առաջին կիսամյակում արձանագրված օպերատիվ ցուցանիշները և ամփոփել կատարված աշխատանքները:



Նրա խոսքով՝ պետության կողմից՝ հատկապես վերջին տարիներին, շարունակաբար իրականացվող պետական աջակցության ծրագրերը նպաստավոր պայմաններ են ստեղծել հանրապետությունում հողերի նպատակային և արդյունավետ օգտագործման, գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների և համախառն բերքի արտադրության ծավալների ավելացման, հողօգտագործողների եկամուտների բարձրացման և տնտեսական աճի ապահովման համար:

Համաձայն ներկայացված տվյալների՝ 2010-2014թ. ցանքատարածություններն ավելացել են շուրջ 50 հազար հեկտարով: Օպերատիվ տվյալներով՝ հանրապետության հողային հաշվեկշռով առկա 447500 հեկտար վարելահողերից այս տարի մշակվում է շուրջ 350000 հեկտարը, որը կազմում է 78,2% կամ ցանքերն ավելացել են 17 հազար հեկտարով՝ նախորդ տարվա 14,7 հազար հեկտարի փոխարեն: «Կատարված աշխատանքները, իրականացված ծրագրերը և բնակլիմայական պայմանները նպաստել են, որպեսզի այս տարի գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալները բոլոր ուղղություններով զգալիորեն գերազանցեն նախորդ տարվա մակարդակը: 2014 թվականի համեմատ նվազում է սպասվում միայն դեղձի մա-

տով», - իր խոսքում նշել է փոխնախարար Գալստյանը:

Մասնավորապես, օպերատիվ տվյալներով, այս տարի արդեն արտադրվել է շուրջ 110 հազար տոննա պտուղ, որից՝ 86 հազար տոննա ծիրան, 165 հազար տոննա բանջարեղեն, որից լոլիկ՝ 43 հազար տոննա, 73 հազար տոննա վաղահաս կարտոֆիլ և 5500 տոննա բոստանային մշակաբույսեր: Արարատյան հարթավայրի ցածրադիր գոտիներում շարունակվում է բերքահավաքը. ցորենի և գարու արտադրության ծավալները կազմել են համապատասխանաբար 45 հազար և 22 հազար տոննա:

Փոխնախարարն ակնկալում է, որ ծիրանի արտադրության ծավալները կգերազանցեն անգամ 2013 թվականի ցուցանիշը. բարձր բերք է ստացվում հատկապես Արմավիրի, Արարատի և Արագածոտնի այգիներից: ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալը հավաստիացրել է՝ մարզերից ստացված պարարտանյութերի (ազոտական, ֆոսֆորական, կալիումական), դիզելային վառելանյութի, 2014թ. աշնանացանի, 2015 զարնանացանի համար անհրաժեշտ սերմացուների պահանջարկն ամբողջությամբ բավարարվել է. մատակարարումները շարունակվում են:

Սամվել Գալստյանը մեկ անգամ ևս հողօգտագործողների ուշադրությունը հրավիրել է հողերի համալիր պարարտացման անհրաժեշտության վրա՝ նշելով, որ հողերի միակողմանի պարարտացումը կանխելու նպատակով, բացի ազոտական պարարտանյութից, պետք է օգտագործել նաև ֆոսֆորական և կալիումական պարարտանյութեր: Շարունակվում է նաև վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորումը. նախորդ տարիների 10 տոկոսի փոխարեն, հողօգտագործողները վճարում են 8 տոկոսով, իսկ 6 տոկոսը սուբսիդավորվում է պետության կողմից: Բացի այդ, իրականացվել են նաև բույսերի պաշտպանության միջոցառումներ՝ Արմավիրի մարզի Աղավնատուն, Այգեկ, Նորապատ, Նորակերտ, Արևադաշտ համայնքների 9,24 հա խաղողի այգիներում հայտնաբերված խաղողի ֆիլոքսերա վնասատուի դեմ:

Արտահանման ծավալներն ավելացել են

Օրերս ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Ռոբերտ Մակարյանը ներկայացրել է պտուղ-բանջարեղենի արտահանման և մթերքների ընթացիկ ցուցանիշները:

Համաձայն ներկայացված օպերատիվ տվյալների՝ հուլիսի 22-ի դրությամբ, հանրապետության պտուղ-բանջարեղեն վերամշակող ընկերությունների կողմից մթերվել է 8593.5 տոննա պտուղբանջարեղեն՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 1537.7 տոննայի դիմաց: Այդ թվում՝ 728.7 տոննա բանջարեղեն և 7864.8 տոննա պտուղ, որից 5767.0 տոննա ծիրան, 372.4 տոննա ընկույզ և 302.9 տոննա այլ պտուղ:

Ռոբերտ Մակարյանի խոսքով՝ ընթացքի մեջ է 2015 թվականի պտուղ-բանջարեղենի և խաղողի բերքի գնման նպատակով գյուղացիական տնտեսությունների և վերամշակող ընկերությունների միջև պայմանագրերի կնքման գործընթացը: Այս պահի դրությամբ, արդեն իսկ կնքվել է 13291 պայմանագիր, որոնց շրջանակներում գյուղացիական տնտեսություններին տրամադրվել է 109.8 մլն. դրամ կանխավճար և 449.1 մլն. դրամի բուժակնություն, պարարտանյութեր և այլ օժանդակություն:

Անդրադառնալով մթերքների գների միջին փոխանախարարը շեշտեց, որ գինը որոշում է շուկան՝ ելնելով առաջարկ-պահանջարկի հարաբերակցությունից, սակայն նախարարության մոնիտորինգը ցույց է տալիս, որ դրանք ցածր չեն լինի նախորդ տարվա գներից: Ըստ նրա՝ 2014 թվականին արձանագրվել է մթերվող պտուղբանջարեղենի և խաղողի դիմաց գյուղացիական տնտեսություններին կատարվող վճարումների գործընթացի բարելավում. վճարումների մեծ մասը կատարվել են անմիջապես գնման պահին կամ 7-10 բանկային օրերի ընթացքում:

2015 թվականի հուլիսի 22-ի դրությամբ, հանրապետությունից արտահանվել է 46523.9 տոննա պտուղբանջարեղեն, խաղող և կարտոֆիլ, այդ թվում՝ 24816.3 տոննա պտուղ, որից՝ 19329.6 տոննա ծիրան, 1908.7 տոննա կեռաս, 1198.1 տոննա խաղող, 16835.6 տոննա բանջարեղեն և 4872.0 տոննա կարտոֆիլ: 2014 թվականի նույն ժա-

մանակահատվածում արտահանվել էր 27503.7 տոննա պտուղբանջարեղեն, խաղող և կարտոֆիլ, այդ թվում՝ 4646.7 տոննա պտուղ, որից՝ 1576.2 տոննա ծիրան, 357.1 տոննա կեռաս,



2620.0 տոննա խաղող, 3413.6 տոննա բանջարեղեն և 19443.3 տոննա կարտոֆիլ, իսկ 2014 թվականին տարեկան արտահանման ծավալները կազմել են 46456.4 տոննա պտուղբանջարեղեն և կարտոֆիլ, որից՝ 1791.2 տոննա ծիրան, 2967.9 տոննա դեղձ, 8001.4 տոննա խաղող, 8961.4 տոննա բանջարեղեն և 21312.8 տոննա կարտոֆիլ:

«Այս օրերի դրությամբ, թարմ պտուղ-բանջարեղենի արտահանման ծավալներն արդեն իսկ գերազանցում են նախորդ ամբողջ տարվա մակարդակը՝ մոտ 68 տոննայով, - նշել է փոխնախարարը: Գյուղացիական տնտեսությունների կողմից արտադրված պտղի, բանջարեղենի և խաղողի իրացման նպատակով, մթերքների գործընթացին զուգահեռ, աշխատանքներ են իրականացվել նաև դրանց վաճառքի աջակցության ուղղությամբ: Այդ կապակցությամբ այս տարի ևս կազմակերպվել են գյուղատնտեսական մթերքի տոնավաճառներ, որոնց մասնակցության համար գրանցվել են շուրջ 2000 գյուղացիական տնտեսություններ: Միջին հաշվով՝ 2 տոնավաճառներում, 1 օրվա ընթացքում, իրացվում է 80-90 տոննա գյուղմթերք, ընդհանուր առմամբ՝ շուրջ 1400 տոննա:

Տոնավաճառներին մասնակցում են ՀՀ տարբեր մարզերը ներկայացնող գյուղացիական տնտեսություններ, որոնք երևանյան սպառողներին են ներկայացնում բացառապես սեփական արտադրանքը:

ՇՈՒԿԱ

Վերաբացվել է գյուղատնտեսական երկրորդ տոնավաճառը

Հուլիսի 18-ին մայրաքաղաքի Մաշտոցի պուրակին հարող փարածքում, ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից և Երևանի քաղաքապետարանի աջակցությամբ, վերաբացվեց գյուղատնտեսական մթերքների երկրորդ տոնավաճառը:

Տոնավաճառի պաշտոնական բացման արարողությանը ներկա էին ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը և Երևանի փոխքաղաքապետ Դավիթ Օհանյանը: Նախարարը, փոխքաղաքապետի հետ միասին, շրջել է տոնավաճառի տաղավարներով, գրուցել վաճառողների և գնորդների հետ, հետաքրքրվել նրանց հուզող հարցերով, ինչպես նաև գնումներ կատարել: «Մեր հիմնական նպատակն է՝ աջակցել գյուղացիական տնտեսու-

յուններին կազմակերպել իրենց կողմից մշակված գյուղմթերքի իրացումը: Նախարարությունը, հինգերորդ տարին անընդմեջ, գյուղատնտեսական տոնավաճառներ է կազմակերպում», - նշել է ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը: Նախարարի խոսքով՝ այս տարի երկրորդ տոնավաճառն ավելի վաղ է բացվել՝ հաշվի առնելով ազգաբնակչության պահանջարկը գյուղմթերքի նկատմամբ, տարածքն ավելի բարեկարգ է, և առավել մեծ թվով գյուղացիական տնտեսություններ են մասնակցության հայտեր ներկայացրել. ավելի քան 120 գործող տաղավարներ կան: Երևանի քաղաքապետի տեղակալ Դավիթ Օհանյանն էլ վստահեցրել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարության հետ համագործակցությունը այսուհետև ևս կշարունակվի, և անհրաժեշտության դեպքում, Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի հանձնարարությամբ, նոր տարածքներ կառանձնացվեն՝ գյուղմթերքի տոնավաճառների համար: Քաղաքապետի

տեղակալը նաև հիշեցրել է, որ բացօթյա անօրինական առևտրի արգելքով պայմանավորված, դեռևս տարիներ առաջ թվով 34 գյուղատնտեսական փոքր շուկաներ են բացվել մայրաքաղաքի բոլոր վարչական շրջաններում: 2015 թվականին գյուղատնտեսական առաջին տոնավաճառը վերաբացվել է հունիսի 6-ին Կասյան փողոցի վերին հատվածում, որտեղ օրական իրացվել է շուրջ 40-50 տոննա գյուղմթերք:



Տոնավաճառները կազմակերպվում են յուրաքանչյուր շաբաթ և կիրակի օրերին, մասնակցում են հանրապետության տարբեր մարզերի գյուղացիական տնտեսություններ, որոնք սպառողներին ներկայացնում են բացառապես սեփական արտադրանքը: Մասնակցությունը տոնավաճառին թույլատրվում է միայն գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների (ԳԱՄԿ)

կողմից տրված համապատասխան տեղեկանքների առկայության դեպքում, որոնք հավաստում են, որ վաճառքի ներկայացվող ապրանքը տվյալ մասնակցի սեփական արտադրանքն է: Տոնավաճառին, առևտրային միջնորդների մասնակցությունը բացառելու նպատակով, կազմակերպիչների կողմից տեղում իրականացվում է վերահսկողություն:

ԲՆԱԿԱՎԱԿՆԵՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄՎԻՐԻ ՄԱՐԶՈՒՄ ՎՏԱՆԳՎԱԾ Է ՈՐԴԱՆ ԿԱՐՄԻՐ ԱՐԺԵՔԱՎՈՐ ՄԻՋԱՏԸ

Արմավիրի մարզում վրանգված է որդան կարմիր էնդեմիկ արժեքավոր միջատը, քանի որ փարիներ շարունակ չի լուծվում արգելավայրի ցանկապարման խնդիրը: Արագափ և Ջրառափ գյուղերում գրեթե արգելավայրը դարձել է արոտավայր՝ շրջակա գյուղերի անասունների համար և մեծ վնաս է հասցվում կենսաբազմազանությանը:

«Որդան կարմիրը կարող է դառնալ ապրանքանիշ կամ բրենդ Հայաստանի համար, որից ստանում են էկոլոգիապես մաքուր, բնական ներկ, որը կարող է օգտագործվել տնտեսության, ինչպես



նաև՝ դիմահարդարման մեջ», - իր կարծիքն է հայտնել ագրոէկոլոգ, ՀՀ բնապահպանության նախարարին կից հասարակական խորհրդի անդամ Գալուստ Նանյանը, ով ուսումնասիրություններ է կատարում որդան կարմիր պահպանության վերաբերյալ: Որդան կարմիրը գտնվում է Արմավիրի մարզի աղուտ հողերի մի հատվածում, որտեղ՝ դեռևս խորհրդային տարիներին, 219,85 հա տարածքի վրա ստեղծվել էր արգելավայր: Այն բաղկացած էր պահպանման 2 առանձին տեղամասերից, որոնցից մեկը՝ 198,33 հա-ն գտնվում էր Արագափ գյուղի հյուսիս-արևմտյան մասում և 21,52 հա՝ Ջրառափի հյուսիսային մասում:

Գիտնականները որդան կարմիր վերաբերյալ ուսումնասիրություններ են կատարել դեռևս 1971 թվականին՝ պարզելով էնդեմիկ արժեքավոր միջատի պահպանման կարևորությունը: Նրանց առաջարկով 1987 թ. ստեղծվել է արգելավայր, որպեսզի պահպանվի թե միջատը և թե նրա սնման որդանախոտը: Կառավարության 2003 թ. որոշմամբ, նախատեսված արգելավայրն այսօր անտեսված է, և վերածվել է արոտավայրի կամ աղբանոցի: Ագրոէկոլոգ Գալուստ Նանյանը դեռ մանկուց է ծանոթ որդան կարմիր արգելավայրի խնդրին, քանի որ ապրում է Ջրառափ գյուղում և նշել է, որ արգելավայրին հարակից՝ Արագափ, Ջրառափ, Եղեգնուտ, Երասխահուն և Արգավանդ համայնքներում, արոտավայրերի և խոտհարքերի բացակայության պատճառով, անասնապահներն արգելավայրի տարածքը դարձրել են արոտավայր: Արածեցման հետևանքով վնասվում է թե որդանը, և թե որդանախոտն ու եղեգը:

Կանոնադրությամբ՝ արգելավայրի վրա բացասական ներգործություն ունեցող տնտեսական գործունեությունը սահմանափակելու նպատակով, արգելավայրի 100 մետր շրջագծով տարածքը սահմանվել է պահպանման գոտի, սակայն, ներկայում այդ պահպանման գոտու մասին խոսք լինել չի կարող, քանի որ այն խախտված է: Պահպանման տարածքում են գտնվում ավազախճային հանքավայրը, ձկնաբուծարանը, գյուղատնտեսական շուկան, հողերի աղազերծման համար նախատեսված ծծմբաթթվի բազան:

Արգելավայրը, պահպանման գոտում գտնվող գյուղատնտեսական մեծածախ շուկայի գործունեության և գյուղերի խիտ բնակեցման հետևանքով, արգելավայրը վերածվել է աղբանոցի: Սա նշանակում է, որ խախտվել են արգելավայրի կանոնադրության կետերը, ինչպես նաև ՄԱԿ-ի կենսաբազմազանության մասին կոնվենցիան: Որդան կարմիրը միջատը վտանգված է, քանի որ՝ բացի գիտնականներից, որդան կարմիր միջատը հավաքել են որդանով հետաքրքրված անձինք և օգտագործել շրթներկի արտադրության և գորգագործության մեջ: Իսկ որդանը տարվա մեջ միայն մեկ ամսվա ընթացքում է դուրս գալիս հողի մակերևույթ: Որդան կարմիրից, տարիներ առաջ գիտնականների կատարած լաբորատոր հետազոտությամբ, ստացվել են նաև ծիածանի բոլոր գույները:

Ցանկապատման վերաբերյալ Ջրառափի գյուղապետ Սամվել Գալստյանը տեղեկացրել է, որ առայժմ ցանկապատման համար կատարվել են միայն չափումներ: Իսկ հարցի վերաբերյալ ձգձգումները բերում են էնդեմիկ միջատի ոչնչացմանը: Ագրոէկոլոգ Գալուստ Նանյանը որդանի պահպանման նպատակով առաջարկել է իրազեկել գյուղացիներին՝ միջատի կարևորության և արգելավայրի պահպանման մասին:

Սաթիկ Իսահակյան
Արմավիր

ԲՆՏԱՆԵԿԱՆ ՖԵՐՄԵՐՈՒԹՅՈՒՆ

«ՄԻԱՍԻՆ ԱՎԵԼԻ ՈՒԺԵՂ ԵՆՔ»

«Ապառաժը ճեղքել՝ ծառ ենք աճեցրել, անապարհ՝ դարձրել այգեստան», - ասում է ՀՀ Արագածոտնի մարզի Ոսկեվազ գյուղի բնակիչ Արամայիս Սահակյանը: Անցնելով նրա հիասքանչ այգու մոտով՝ հասկանում ես, որ ասվածը չափազանցություն չէ, այլ՝ ընդհակառակը, նույնիսկ համեստորեն է ասված:

Հանրապետության նախալեռնային գոտում և Արարատյան դաշտավայրում աճող բազմաթիվ ծառատեսակներով և թփերով հարուստ այգին Արամայիս Սահակյանը հիմնել է տիկնոջ՝ Մարո Ստեփանյանի հետ համատեղ: Այգու մշակության աշխատանքներին իր ծանրակշիռ մասնակցությունն ունի նաև որդին՝ Դավիթ Սահակյանը, նա ձեռնամուխ է եղել գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը: Արտադրում են մեծ քանակությամբ ծիրան, դեղձ, սալոր, տանձ, խնձոր, ընկույզ, սերկևիլ, մոշ, ազնվամորի և այլ պտուղներ ու հատապտուղներ: Համային հատկանիշներով և ապրանքային տեսքով աչքի ընկնող միզն

րով է պատմում յուրաքանչյուր ծառ ու թփի մասին: «Դրանք կարծես իմ երեխաները լինեն, այդպիսի հոգատարությամբ եմ ես վերաբերվում այգու նկատմամբ»,- նշում է տիկին Մարոն:



Բազմաճյուղ այս տնտեսությունը մասնագիտացել է նաև անասնաբուծության գծով, զբաղվում են թռչնաբուծությամբ և մեղվաբուծությամբ: Արտադրվում է թռչնամիս, ձու, կազմակերպվում է նաև ճուղի վաճառք: Ի դեպ, ֆերմերային լայնամասշտաբ գործունեություն ծավալող այս ընկերությունն առաջիններից էր, որ տարիներ առաջ

տիպային խոզանոց, մանր և խոշոր եղջերավոր կենդանիների բուծման համար նախատեսված անասնագու: Նախատեսում են ընդլայնել նաև պտղաբուծությունը: Ծրագրերը շատ են, բոլորն էլ իրատեսական ու հեռանկարային: «Կուզենայինք համախմբվել և ստեղծել նաև կոոպերատիվ տնտեսություն: Գյուղում արդեն շատ գյուղացիական տնտեսություններ ցանկանում են միավորվել կոոպերացիայի մեջ: Տեսնելով հարևան մարզերի կոոպերատիվների ուսանելի փորձերը, մենք նույնպես կուզենայինք օգտվել վերջինիս առավելություններից ու ընձեռած հնարավորություններից: Այդ ժամանակ կընդլայնենք արտադրության ծավալները, կհզորացնենք տնտեսությունը, չէ՞ որ միասին ավելի ուժեղ ենք», - հավելում է Արամայիս Սահակյանը:

Արվում է հնարավորը, որպեսզի ոչ միայն պահպանվի այն, ինչ ունեն, այլև՝ ավելանա, ընդարձակվի ու զարգացում ապրի: Անցումը դեպի կոոպերացիային՝ տնտեսության բարգավաճման լայն և հեռանկարային հնարավորություններ է ստեղծում: Ֆերմերային տնտեսությունն այսօր ունի գյուղատնտեսական տեխնիկայի նորացման, համալրման անհրաժեշտություն: Բացի այդ, համատեղ կլուծվեն նաև բերքի իրացման խնդիրները: Եվ, ի վերջո, տնտեսավարման այս եղանակը հնարավորություն կտա ավելացնել գյուղացու եկամուտները, ինչը և կոոպերացիայի առանցքային խնդիրներից մեկն է:

Նելլի Սահակյան



ու հատապտուղներն իրացվում են հանրապետության տարբեր շուկաներում: Բարձր որակի շնորհիվ, դրանք մեծ պահանջարկ են վայելում սպառողների շրջանում: Հաջողությունների գաղտնիքն, ըստ ֆերմերի, նվիրված աշխատանքն է: «Պետք է սիրով կատարես այն գործը, որը նախաձեռնել ես: Իսկ որպեսզի սիրով կատարես՝ նախևառաջ, պետք է սիրես քո հայրենիքը, հայրենի գյուղը, նախնիներիդ երկիրը, արժեվորես այն ժառանգությունը, որը բաժին է հասել քեզ», - ասում է Արամայիս Սահակյանը: Այգու խնամքի, էտի և պատվաստման աշխատանքները հիմնականում կատարում է տիկին Մարոն: Նրա հետ զրուցելիս նկատում ես, թե ինչպիսի սի-

ստեղծեց Ոսկեվազի խորհունտեսությանը կից «Արխաշան» անասնապահական կոոպերատիվը, որը մասնագիտացել էր խոզի մսի արտադրության մեջ: Միաժամանակ, կազմակերպում էին նաև խոճկորների վաճառք: Սակայն, չունենալով սեփական կերարտադրության բազա՝ աշխատատար այդ ճյուղով զբաղվում են ընդհատումներով: Ֆերմերային գործունեություն ծավալող այս ընտանիքը Աշտարակի վարչական տարածքում ունի գյուղատնտեսական նշանակության հողատարածքներ, որոնք այսօր չեն մշակվում՝ ֆինանսական միջոցների բացակայության պատճառով: Արամայիս Սահակյանի կարծիքով՝ աջակցության ծրագրերի իրականացման

ՀԵՏԱԲՈՒՆՆԵՐԸ Է...

ԲԱԴՐԻՋԱՆԻ ԱՌԱՆՁՆԱԿԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բադրիջանի հայրենիքը Հնդկաստանի և Չինաստանի արևադարձային կլիմայական գոտիներն են, որտեղ այն հանդիպում է բնական պայմաններում: Ցողունը ճյուղավոր է, կանաչ կամ մանուշակագույն՝ ծածկված աստղանման մազիկներով, վերևի մասի տերևներն ավելի մանր են, զույգ ձվաձև, համարյա թիականման, նոսր խավապատ:

Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղակալում է հուլիսին: Բադրիջանն աչքի է ընկնում ձևերի և գույների բազմազանությամբ: Հայտնի են տանձի, օվալի և գնդի ձև ունեցող՝ սպիտակ, դեղին, կանաչ, շագանակագույն, մուգ-մանուշակագույն պտղի տեսակները: Մեկ պտղի զանգվածը կարող է տատանվել 30 գրամից մինչև 0,5-2 կգ: Պտուղն ուտելի է, երբ սերմերը կաթնային հասունության են: Հասուն պտուղներում պարունակվում է մոտ 90 տոկոս ջուր, 3-4 տոկոս շաքարներ, 1,4 տոկոս սպիտակուց, 1,5 տոկոս նուրբ բջջանք, 0,13 տոկոս օրգանական թթուներ, 0,15 տոկոս դաբաղանյութ, ենթավիտամին A, վիտամին C, նիացին, ֆոլիաթթու, պիրիդոքսին, B1, B2 վիտամիններ, նաև կալիում, կալցիում, ֆոսֆոր, մագնիսիում, պղինձ, երկաթ, ֆենոլազա ֆերմենտ: Գերհասունացած պտուղներում բարձր է սոլանինի պարունակությունը, որը դառնահամ նյութ է և կարող է առաջացնել մարսողության խանգարում: Սոլանինի բաղադրությունը բարձր է կարտոֆիլի կանաչած պալարում և լոլիկի կանաչ զանգվածում:

նող պուրինների հագեցվածության դեպքում:

Փորձնական եղանակով ապացուցված է, որ նման սննդակարգը մեծապես նպաստում է միզաքարային հիվանդության բուժման ընթացքին և զգալիորեն նվազեցնում է հոդատապի հետևանքով առաջացող նոպաների հաճախականությունը: Օրը 200 գ բադրիջան ուտելու դեպքում, մենք բավարարում ենք օրգանիզմի մեկ օրվա կալիումի պահանջարկի 25-35 տոկոսը (235 մգ՝ 100գ հումքի մեջ): Կալիումն ունի դրական ազդեցություն սրտի աշխատանքի վրա, քանի որ նպաստում է ավելորդ հեղուկի հեռացմանն օրգանիզմից:

Գիտնականներն ապացուցել են, որ կապտամանուշակագույն երանգի բադրիջանը հեռացնում է օրգանիզմից «վատ» խոլեստերինի գրեթե 50 տոկոսը:



ար: Նշվում է, որ նման հատկություն ունի բադրիջանում պարունակվող մելաՆոգենը: Բադրիջանը կանխարգելում է խոլեստերինի կուտակումը յարդում և արյունատար անոթների պատերի վրա: Այն օգտակար է ինսուլին և ինֆարկտ տարած հիվանդներին, սրտի անբավարար աշխատանքի և հիպերտոնիայի դեպքում:

Բադրիջանը լավացնում է մարսողությունը և աղիների անցանելիությունը (շարժող ուժը), հատկապես օգտակար է ստամոքսաղիայի ոչ բավարար արտազատման և քրոնիկ ստամոքսաբորբի, հաճախ կրկնվող փորկապության դեպքում: Պտղամսում պարունակվող նուրբ բջջանքը կլանում և հեռացնում է օրգանիզմից թույները:

Բադրիջանը աղիների միկրոֆլորան բարելավող հատկության շնորհիվ նպաստում է քաշի նվազեցմանը՝ անկախ պատրաստման եղանակից՝ թորմ, հյութ, եփած, խորոված, խաշած և այլն (բացառությամբ՝ տապակածի):

Բացի վերոգրյալ «արժանիքներից», բադրիջանը վերականգնում է կոճիկի հյուսվածքները և ամրացնում ոսկորները: Օգտակար է օստեոխոնդրոզի, օստեոպորոզի, դեֆորմացիոն արթրոզի դեպքում:

Սոլանինը քայքայվում է աղի մեջ:

Սպիտակ գույնի բադրիջանը սոլանին չի պարունակում: Գիտական անվանումն է՝ Solanum melongena, որն առաջացել է սանսկրիտի «vatin ganah» բառերից, որը պարսկերեն հնչում է բադրիջան: Ա. Ամասիացին հիշատակում է «պատնճան» անվանմամբ. քացախով եփելու և ուտելու դեպքում՝ կրակի լարի և փայծաղի խցանումները: Ջերմասեր և լուսասեր բույս է:

Հնագույն ժամանակներից մշակվել է Հայաստանում: Որոշ արաբական երկրներում բադրիջանն անվանում են «հայկական վարունգ»:

Միզամուղ հատկության շնորհիվ, բադրիջանը նպաստում է ուրատների հեռացմանը երկամներից և միզապարկից, քանի որ ունի օրգանիզմում աղերի և հեղուկի հավասարակշռությունը կարգավորող հատկություն: Բադրիջանից պատրաստված ուտեստները խորհուրդ է տրվում ընդգրկել միզաքարային հիվանդության և օրգանիզմում նստվածքներ առաջաց-

ԳԵՏՆԱԽՆՁՈՐ

Գետնախնձորը (Helianthus tuberosus) կամ գետնատանձը, բարդածողկավորների ընտանիքի բազմամյա բույս է: Ցողունի բարձրությունը 2-4 մետր է: Տերևները ձվաձև են, կտրտված եզրերով, թավոտ: Ծաղկաբույլը զամբյուղ է: Գողմեջ, ցողունի հիմքի մասում առաջանում են կլոր, երկարավուն, սպիտակ, դեղին, կարմիր գույնի պալարներ, որոնք օգտագործվում են որպես սննդամթերք և կեր: Գետնախնձորից ստանում են սպիրտ և ֆրուկտոզ: Տերևներից պատրաստում են կան սիլոս: Պալարների բերքը 400-500 g/ha է:

Գետնախնձորի հայրենիքը Հյուսիսային Ամերիկան է, որտեղ մինչ օրս էլ հանդիպում է այս բույսի վայրի տեսակը: Այս աշխարհամասից է այն սկսել իր «ուղևորությունը» դեպի Եվրոպա: Ծանախարհորդ Սեմյուել դը Շամլայնը 1605 թ.-ին գետնախնձոր է ուղարկել Ֆրանսիա: Այստեղ է, որ տոպիկամբուրը (ինդկացիների լեզվով՝ արևարմատ)

ման բոլոր փուլերում, ինչը հաստատվել է տարբեր տարիներին իրարից անկախ կատարված մի շարք հետազոտություններով:

Նպաստելով գյուղագյուղի յուրացմանն՝ ապահովում է էներգետիկ կյանքափոխանակություն, ինչն էլ, իր հերթին, նպաստում է սպիտակուցի, խոլեստերինի և լեղաթթուների սինթե-



ստացել է գետնատանձ անունը, որով էլ 18 դարում հասավ Ռուսաստան:

Պատերազմական սովի ժամանակ, երբ դժվար էր անգամ կարտոֆիլ ձեռք բերել, գետնախնձորն ու ճակնդեղը եվրոպացիներին օգնեցին ապրել: Մեր օրերում այդ բանջարեղենն աճում է մոլորակի տարբեր անկյուններում, սակայն, այն գյուղատնտեսական արժեքավոր մշակաբույս այդպես էլ չդարձավ՝ երկարատև պահպանելու դժվարության պատճառով:

Չնայած անվանն ու կարտոֆիլի հետ հաճախակի համեմատությանը՝ արտաքին ընդհանրության պատճառով, այս բանջարեղենն արևածաղի ընտանիքից է, որի մասին հուշում է թերևս միայն վերագետնյա փրերի նմանությունը:

Կարտոֆիլի նման, այն ևս օգտագործվում է տապակած, խաշած, ինչպես նաև հում վիճակում, դրանից պատրաստում են ապուր, խյուս և աղցան:

Գետնախնձորի քիմիական բաղադրությունը բարեբար ազդեցություն է ունենում մարսողական օրգան-համակարգի հիվանդությունների զարգաց-

զին: Գետնախնձորը պաշտպանում է լյարդը հիվանդածին մանրէներից: Ի դեպ, այն, ի տարբերություն բազմաթիվ դեղամիջոցների, հակացուցված չէ լյարդի հիվանդությունների ժամանակ, սակայն, կարող է վնասել օրգանիզմին՝ անհատական անընկալության դեպքում: Մեծաքանակ բջջանքն ու ինուլինը կարող են հանգեցնել աղետամոլքային տրակտում գազառաջացման, ուստի ովքեր ունեն նման խնդիր, լավ կլինի՝ չհարաշահեն հում գետնախնձորի կիրառումը:

Վիտամիններով ու հանքանյութերով հարուստ գետնախնձորն օգտակար բանջարեղեն է, այն խորհուրդ է տրվում նաև շաքարախտի դեպքում: Գետնախնձորն օգտագործում են կան թթուների ու մարինադների մեջ: Իսկ Գերմանիայում գետնախնձորից զարեջուր են պատրաստում:

Օգտագործելուց առաջ հարկավոր է պարզապես շատ լավ լվանալ, իսկ կեղևահանել պետք չէ, քանի որ դրա մեջ շատ օգտակար կյուլեր կան:

Թարգմանությունը՝ Լիլիթ Գասպարյանի

Advertisement for Agronews magazine, 2015 issue. Includes subscription rates for 1 year, 6 months, and 1 month, and contact information for the publisher.

Footer section containing the Agronews logo, contact information (phone, email, website), and address details.